

### ՏԻՆԱՅԲ ՓԱՓԿԱՍՈՒՆԵՐ ՀՅՅՈՅ ԱՇԽԱՐՀԻՆ

(Տես Քաղմայիկ պ 1919 էջ 864)

#### Բ.

#### ՏԻՆԱՅ ԱՐՄԵՆՈՒԷԻ ԼԷՄՍԸՆ

Մեղբաժորիկ Եղիշէի ոսկերարբառ վերնազրին տակ, Հայոց աշխարհի տիկիններուն մէջ, մենք կը յօժարինք դասուած տեսնել հայ քոյրիկներու նաև այն շարքը՝ որոնք զինուած հայրենասիրական անարատ զգացումներով, զաղափարական ըմբռնումներու ճակատամարտին մէջ՝ գինուորացրուեցան Ազգասիրութեան բանակին, «Եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմի»:

Տիկին Անահիտ Արզարեանէ ետքը, և ի մէջ այլոց, ամերիկեան երկնքի տակ իւր անկեղծ հայրենասիրութեամբը փայլած հայուհի մըն է օրիորդ Արմենուհի Թաշճեանը, այժմ՝ տիկին Լէմսըն, իւր հայրը, Պատ. Յակոբ, կեսարացի էր, և իւր մայրը, Սօֆի Սեպուհեան, Մշեցի, սակայն ինքը ծնած է ի կարին 1885ին: Իւր նախնական ուսմունքը ի Պարտիզակ և յիշմիր ստանալէ յետոյ՝ 1897ին ղըրկուած է Գերմանիայ, Հիլտըն, Աղշկանց Գիշերօթիկ վարժարանը, ուսկից՝ երկու տարի վերջը՝ անցնելով Քայքրովերդ, չորս տարուան շրջանով մը աւարտեք է իւր ուսմունքը՝ իբրև Մանկավարժ: 1904ին իրմիւր դասնալով՝ «Աղշկանց Ամերիկեան Դպրոց»ին մէջ պաշտօնավարած է՝ տալով դասեր Մանկավարժութեան և Գծագրութեան. ապա՝ մինչ ուսուցչական պաշտօնով Գերմանիա կը հրաւիրուէք, ինքը նախընտրեք է Ամերիկայ անցնիլ և Քլիվլենդի «Աղշկանց վարժարան»ին մէջ գործելու, ուր և երկու տարի վարժուհի եղած է գերմաներէնի: — Ռժշկական հետազօտութիւններ կատարելու նպատակով՝ մտեր է Ճօն Հօփքինս բժշկական վարժարանը,

և այդ համբաււոր շէնքին դասերուն չորս տարի ունկնդրելէ ետքն ալ՝ այցելիք է Միացեալ Նահանգներու շատ մը հռչակաւոր ըլիկիք բուժարաններն ևս, 1912ին գնացիք է մինչև Սիտքա (յԱլասքայ) լոսդի ձկնորուն (Salmone) ուղեղը ուսումնասիրելու: — Իւր զանազան դիտողութեանց արդիւնքները՝ հաճոյքով կարդացուեցան այլ և այլ հանդէսներու շարք մը յօդուածներուն մէջ. 1. - Anoci - Association, 2. - Anemia and Resuscitation, 3. - Mechanistic Theory of War and Peace. 4. - Man and Adoptive Mechanisme Capters in Keen's Surgery. և այլն: — Յետ մայրենի խնամքներ տաճելու իւր անդրանիկ զաւակին գրեք է նաև - My Birth անունով - իւր ցարդ հրատարակած երկերուն էն զիտնական և էն ժողովրդական գրքոյկը. որ է ինքնակենսագրութիւնը՝ դեռ չծնած մանկիկի:

Տիկին Արմենուհի՝ իւր հմտական ձիրքերուն շնորհիւ՝ փայլուն անդամ մը հանդիսացած է բազմաթիւ կանառներու, ի Սիւթըլ, ուր կը բնակի նա: Ազդու և անդով խօսած ուզործած է ի նպաստ Հայոց աշխարհին: «Խաչուած Հայաստանի պատմորիւն» ներկուտ յօդուած մ'է որ հրատարակուեցաւ նախ Սիւթըլ Դէյլի Թայմըզի մէջ՝ ու ապա նաև առանձին թուոցիկով (տես ծանուցուած թագմ. 1919 Նոյ. ի շապկին վրայ):

Թող իրենց համբաւովն ալ ապրին՝ այն ամէն Արմենուհի Հայուհիները՝ որոնք, օտար շրջանակներու մէջ, փափկասուն տիկնայց հանդիսացած պարագաներէն չզեղման, և ջանացին հաւատարիմ մնալ իրենց հայրենասիրական պարտքերուն և ձեռնտու ըլլալ բազմաչարչար Մայր Հայաստանին:

ՄԵՆԱՅԵՐ